# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Կամարիս համայնք, գ.Կամարիս .
kamarisigyuxapetaran@mail.ru

N 217
*28 դեկտեմբեր 2017թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ Մարզպետ

Ձեզ ենք ուղղարկում Կամարիս համայնքի ավագանու, 22.12.2017 թվականի թիվ 13-րդ հերթական նիստի, որոշումները:

Առդիր 40 էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**

*Կատ. համայնքի ղեկավարի օգնական՝ Հ. Ծառուկյան*
*022267757*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս. 0222-6-77-57

# ՈՐՈՇՈՒՄ

22 դեկտեմբերի 2017 թվականի N 53-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով .

*Համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիսի գյուղական համայնքի վարչական տարածքում 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Համայնքի ղեկավարի 2018 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
3. Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Կամարիսի համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ ,,ԿԱԿԱՉ՛,, մամկապարտեզի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ի հաստատելու մասին:
5 Կամարիսի համայնքային ոչ առևտրային կազմակերպության «ԿԱԿԱՉ» մանկապարտեզ հաճախող երեխաների 2018թվականի ծնողական վճար սահմանելու մասին:
6..Կամարիս համայնքի 2018թ բյուջեի քննարկման և հաստատման մասին;
7. Կամարիս համայնքի տարածքում գտնվող, սակայն անճշտությամբ «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված գյուղատնտեսական նշանակության հողամասի մասին:
8.Համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 23-ի N «Հաստատել Կամարիս համայնքի 2017թ բյուջեն» 49-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՁԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՈՒ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«22» Դեկտեմբերի 2017թվականի N 54- Ն**

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածները և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը.

*Համայնքի ավագանին որոշում է*

1.Կամարիս համայնքի վարչական տարածքում 2018թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ ,

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ...ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 54-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆԻՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| ՀՀ | Տեղական տուրքերի տեսակները | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | **1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝** | |
| | **1) հիմնական օբյեկտների համար՝**<br>ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15000 |
| | 2) սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| | ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 20000 |
| | բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 35000 |
| | գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 55000 |
| | դ )3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 100000 |
| | **3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝** | |
| | ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 1500 |
| | բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 2500 |
| 2 | **2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝** | |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3000 |
| | 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի՝,ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| | 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը | |
| 3 | **3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է** | 5000 |
| 4 | **4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝** | |

| | | |
|---|---|---|
| | 1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| | ա. մինչև 26 քառակուսի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 6000 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 7000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 50000 |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5000 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 12000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 50000 |
| 5 | **5. Համայնքի տարածքում՝** | |
| | 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար. | 250 |
| | 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 150000 |
| | 3) խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 50000 |
| | 4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ հիմնական շինությունների ներսում՝ | |
| | **հիմնական շինությունների ներսում՝** | |
| | ա .մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2000 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի | 5000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 7000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10000 |

| | | |
|---|---|---|
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 20000 |
| | ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 500 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 4000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 7000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10000 |
| 6 | **6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքներ (սաունաներ), խաղատներ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝** | |
| | 1) առևտրի օբյեկտների համար՝ | 50000 |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 50000 |
| | 3) ) բաղնիքների (սաունաների) համար՝ | 250000 |
| | 4) խաղատների կազմակերպման համար՝ | 500000 |
| | 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 250000 |
| | 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 150000 |
| | 7) համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ | 0 |
| 7 | **7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝** | |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2000 |
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3500 |
| | 3) այլ արտաքին գովազդի համար՝ | 1500 |
| | 4) դատարկ գովազդային վահանակների համար՝ | 700 |
| 8 | **8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է** | 3000 |
| 9 | **9. Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է** | 100000 |
| 10 | **10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է** | 10000 |
| 11 | **11. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար** | 50000 |
| 1) | առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվ շինությունների մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | |
| 12 | **12.Տեղական վճարների տեսակները** | |

| | |
|---|---|
| 1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և կատարելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 3000 |
| 2)Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 2000 |
| 3) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | 5000 |
| 3/Աղբահանության ամսական վճարը սահմանվում է՝ | |
| առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | 10 |
| արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | 10 |
| կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | 5 |
| ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար, կամ | 150 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N 55-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

*Համայնքի ավագանին որոշում է*

1.Համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 280.0 /երկու հարյուր ութսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թվականի հունվարի 1-ից:

3.. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի «Կամարիս համայնքի ղեկավարի 2017թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 44-Ա որոշումը:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՔԱՐՁԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2017թվականի N 56-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասին 28-րդ կետի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է*

1.Հաստատել Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարանի աշխատակազմի 2018թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի
2.Անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին կնքել աշխատանքային պայմանագրեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թվականի հունվարի 1-ից:
4.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի «Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարանի աշխատակազմի 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 45-Ա որոշումը:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի

ավագանու 2017 թվականի

դեկտեմբերի 22-ի N 56-Ա որոշման

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիր | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Հավել ա-վճարը (դրամ) | Աշխատավարձի չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 280000 | - | 280000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 200000 | - | 200000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | - | 1 | 180000 | - | 180000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայող | 1.2.1 | 1 | 205000 | - | 205000 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայող | 3.1.1 | 1 | 120000 | 12000 | 132000 |
| 6 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայող | 3.1.2 | 1 | 120000 | | 120000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քաղաքացիական աշխատանք կատարողներ | | | | | | |
| 7 | | Գեղմասվար | | - | 1 | 100000 | - | 100000 |
| 8 | | Գրադարանավար | | - | 1 | 80000 | - | 80000 |
| | | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | |
| 9 | | Օպերատոր | Տեղնիկական սպասարկման | - | 1 | 120000 | - | 120000 |
| 10 | | Պահակ | Տեղնիկական սպասարկման | - | 2 | 75000 | - | 150000 |
| 11 | | Վարորդ | Տեղնիկական սպասարկման | - | 1 | 150000 | - | 150000 |
| 12 | | Տեխ. Աշխատող | Տեղնիկական սպասարկման | - | 2 | 75000 | - | 150000 |
| 13 | | Բանվոր | Տեղնիկական սպասարկման | - | 2 | 75000 | - | 150000 |
| | | Ընդամենը | | | 16 | | 12000 | 1867000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017թվականի N 57-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԿԱԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Կամարիսի համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Կակաչ» մանկապարտեզի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված

Կամարիս համայնքի ավագանու

2017թ դեկտեմբերի 22 -ի N 57-Ա որոշման

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ.

Աշխատակիցների քանակը՝ _17_

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Դրույքը | Դրույքա չափը ( դրամ ) | Ընդամենը աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 1 | 120000 | 130000 |
| 2 | Դաստիարակ | 4 | 4 | 80000 | 320000 |
| 3 | Դաստիարակի օգնական | 4 | 4 | 80000 | 320000 |
| 4 | Գլխ. հաշվապահ | 0.5 | 0.5 | 120000 | 60000 |
| 5 | Երաժշտության դաստիարակ | 1 | 1 | 75000 | 75000 |
| 6 | Խոհարար | 1 | 1 | 80000 | 80000 |
| 7 | Խոհարարի օգնական | 1 | 1 | 80000 | 80000 |
| 8 | տնտեսվար | 0.5 | 0.5 | 120000 | 60000 |
| 9 | Օժանդակ բանվոր | 0.5 | 0.5 | 120000 | 60000 |
| 10 | Տեխնիկական աշխատող | 0.5 | 0.5 | 120000 | 60000 |
| 11 | Պահակ | 1 | 1 | 80000 | 80000 |
| 12 | ԸՆԴԱՄԵՆԸ | 17 | | | 1370000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N 58-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ԿԱԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, հիմք ընդունելով Կամարիս համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին *որոշում է*.

1.1 Կամարիսի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն «ԿԱԿԱՉ» մանկապարտեզ հաճախող երեխաների 2018թվականի ծնողական վճար սահմանել 5000 դրամ:

1.2 Այլ համայնքներից մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան ծնողական վճար սահմանել 13000 դրամ:

1.3 Այլ համայնքներից մանկապարտեզ հաճախող նույն ընտանիքից երկու երեխայի համար ծնողական վճար սահմանել 20000 դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳԾՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՁԱՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ու Մ

«22» Դեկտեմբերի 2017թվականի N 59- Ն

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով .

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Կամարիս համայնքի 2018թ բյուջեն՝ համաձայն հավելվածի

2.Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել փոփոխություններ հաստատված հատկացումների ընդհանուր ծավալի 15./. չափով :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«22» դեկտեմբեր 2017 թվականի N 60-Ա**

### ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2017 թվականի սեպտեմբեր 08-ի N Կ-05/09/2017-17-0067 տեղեկանքը, Կամարիս համայնքի ավագանին որոշում է՝

1. Կամարիս համայնքի տարածքում գտնվող, սակայն անճշտությամբ «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված 07-035-131-012ծածկագրի 0.0718հա հողամասը ճանաչել որպես Կամարիս համայնքի սեփականություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)    Դեմ 0    Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

## ՈՐՈՇՈՒՄ

<<22>> ԴԵԿՏԵՄԲԵՐ **2017**թվականի **N 61-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով,

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 23-ի N «Հաստատել Կամարիս համայնքի 2017թ բյուջեն» 49-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ Համայնքի 2017թ վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 1000.0հազ.դրամով՝ տող 7136 և այն ուղղել ծախսային մասին բաժին 09 խումբ 1 դաս 1 հոդված 4511:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Կողմ (7) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Կամարիս համայնքի

ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 59-Ն որոշմամբ

Աբովյանի տեղական գանձապետական բաժանմունք

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գոռ Հակոբյան

(Անուն, հայրանուն, ազգանուն)